Վրթանես Փափազյան

Նամակ Դավիթ Անանունին

1919թ. օգոստ. 6, Թիֆլիս

Սիրելի պ. Անանուն

Ի սեր Աստծո. մտե՛ք այդ մեր ֆինանսների նախարարի մոտ և ջանացեք, որ իսկույն, շատ շուտով այն քննից հանձնաժողովի 210 հազար չեկը ուղարկեն, որպեսզի փող ստանանք: Խայտառակություն է ուղղակի. հունիսի 24-ին նախարարների խորհուրդը վճռել է տալ այդ գումարը. իսկ մինչև այժմ (մեկ ամիս) այդ գումարի չեկը չեն ուղարկել, որպեսզի այստեղի մեր միսիայի գանձարանը փողը վճարի: Մնացել ենք, ես մանավանդ, ուղղակի, բառիս բուն նշանակությամբ՝ քաղցած:

Մի ճար արեք, տեսեք այդ ֆինանսների նախարարին և հասկացրեք, որ չենք կարող այլևս սպասել և որ անոթի ենք: Հասկանո՞ւմ է նա արդյոք, որ այսքան ուշացնում է մեր ստանալիք ռոճիկները:

Հետո՝ ի՞նչ եղավ ձեր այն գրքերի վաճառման արդյունքը:

Իմ դրությունը չափազանց անտանելի է դարձել, և չգիտեմ ինչ անել: Գրողներին հատկացրել է 100.000-ը ոչ ստացվել է մինչև այժմ և ոչ էլ երևի պիտի ստացվի: Ահագին բաներ են ծագել այդ չստացված գումարի շուրջը. . .

Այս ամենից հետո՝ պիտի խնդրեի, որ եպիսկոպոսի հետ էլ տեսնվելով, մի պաշտոն գտնեք ինձ՝ Երևան գալու: Գուցե կարելի լինի կրթական նախարարության մեջ դպրոցների շրջանային տեսչություն և այլ մի հարմար

գործ . . .

Շատ բարևներով՝ Վ. Փափազյան